

Պ-839-18.01.2021,19.03.2021-SSԳԲ-011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Օրենսգրքի 68-րդ հոդվածի.

1. 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Կազմակերպիչն աճուրդի անցկացումից մեկ ամիս առաջ մամուլով, գանգվածային այլ լրատվության միջոցով եւ www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, մարզպետարանի պաշտոնական կայքէջում, ինչպես նաեւ առկայության դեպքում համայնքի պաշտոնական համացանցային կայքում հրապարակում է սակարկությունների անցկացման տեղը, օրը, ժամը, հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, մեկնարկային գինը, նախավճարը, քայլի չափը, օգտագործման նպատակը, չափերը, ճանապարհների, ջրատարի, կոյուղու, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի առկայության մասին տվյալները (գյուղատնտեսական հողամասերի դեպքում՝ նաեւ որակական հատկանիշները), ինչպես նաեւ տվյալ հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը:»:

2. 5-րդ մասում առաջին նախադասության «5» թիվը փոխարինել «50» թվով:

Հոդված 2. Օրենսգրքի 70-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

1. Աճուրդում հաղթած անձը 10 օրվա ընթացքում պարտավոր է ամբողջությամբ վճարել սակարկությունների արդյունքում ձևավորված գինը: Եթե նշված ժամկետում գինը չի վճարվում կամ սակարկությունում հաղթած անձը հրաժարվում է սակարկությունների արդյունքների մասին արձանագրությունը ստորագրելուց, այնպես էլ առուվաճառքի պայմանագիր կնքելուց, ապա համարվում է, որ հաղթած անձը հրաժարվել է հողամասը ձեռք բերելուց:

2. Հաղթողի կողմից գումարն ամբողջությամբ վճարելուց հետո՝ երկու օրվա ընթացքում, կողմերի միջև կնքվում է օտարման պայմանագիր, որը վավերացվում է նոտարական կարգով և ենթակա է պետական գրանցման:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

~~Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 2-ի ՀՕ-185 հոդային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրքի) 67-րդ հոդվածի 2-րդ մասում «20» թիվը փոխարինել «30» թվով եւ «50» թիվը փոխարինել «100» թվով:~~

~~Հոդված 2. Հոդված 1. Օրենսգրքի 68-րդ հոդվածի.~~

1. 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Կազմակերպիչն աճուրդի անցկացումից մեկ ամիս առաջ մամուլով, զանգվածային այլ լրատվության միջոցով եւ www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, մարզպետարանի պաշտոնական կայքէջում, ինչպես նաեւ առկայության դեպքում համայնքի պաշտոնական համացանցային կայքում հրապարակում է սակարկությունների անցկացման տեղը, օրը, ժամը, հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, մեկնարկային գինը, նախավճարը, քայլի չափը, օգտագործման նպատակը, չափերը, ճանապարհների, ջրատարի, կոյուղու, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի առկայության մասին տվյալները (գյուղատնտեսական հողամասերի դեպքում՝ նաեւ որակական հատկանիշները), ինչպես նաեւ տվյալ հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը:»:

2. 5-րդ մասում առաջին նախադասության «5» թիվը փոխարինել «50» թվով:

~~3. 6-րդ մասի առաջին նախադասության «մեկ» բառը փոխարինել «երեք» բառով:~~

~~Հոդված 3_Օրենսգրքի 70-րդ հոդված.~~

~~1. 1-ին մասի «գումարը» բառից հետո ավելացնել «,երեւ նշված ժամկետում գինը չի վճարվում, ապա աճուրդը համարվում է չկայացած» նախադասությունը:~~

~~2. 1-ին մասի՝ «հաղթող է ճանաչվում սակարկությունների ընթացքում երկրորդ առավելագույն գին առաջարկած անձը, որը նույնպես պարտավոր է 10 օրվա ընթացքում ամբողջությամբ վճարել այդ գումարը» բառերը փոխարինել «կամ սակարկությունում հաղթած անձը հրաժարվում է առուվաճառքի պայմանագիր կնքելուց, ապա համարվում է, որ հաղթած անձը հրաժարվել է հողամասը ձեռք բերելուց» բառերով:~~

3. 2-րդ մասում «Գումարն» բառը փոխարինել «Հաղթողի կողմից գումարն» բառերով

Հոդված 2. Օրենսգրքի 70-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. ։

1. Աճուրդում հաղթած անձը 10 օրվա ընթացքում պարտավոր է ամբողջությամբ վճարել սակարկությունների արդյունքում ձևավորված գինը: Եթե նշված ժամկետում գինը չի վճարվում կամ սակարկությունում հաղթած անձը հրաժարվում է սակարկությունների արդյունքների մասին արձանագրությունը ստորագրելուց, այնպես էլ առուվաճառքի պայմանագիր կնքելուց, ապա համարվում է, որ հաղթած անձը հրաժարվել է հողամասը ձեռք բերելուց:

2. Հաղթողի կողմից գումարն ամբողջությամբ վճարելուց հետո՝ երկու օրվա ընթացքում, կողմերի միջև կնքվում է օտարման պայմանագիր, որը վավերացվում է նոտարական կարգով և ենթակա է պետական գրանցման:

Հոդված 4. Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

Պ-839-18.01.2021-ՏՏԳԲ-011/1 «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	Առաջարկի հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկը ընդունելու կամ մերժելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածը հանել	Ընդունելի է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է
2.	ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածը փոխել Հոդված 1-ով:	Ընդունելի է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է
3.	ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի «մեկնարկային գինը» բառից հետո լրացնել «նախավճար» և «քայլի չափը» բառերը.	Ընդունելի է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է
4.	ԱԺ	Նախագծի 2-րդ	Նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ մասը հանել	Ընդունելի է:	Ընդունվել է

	պատգամավոր Արտակ Մանուկյան	հոդված		Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	
5.	ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան	Նախագծի 3-րդ հոդված	<p>Նախագծի 3-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>Հոդված 2. Օրենսգրքի 70-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>1. Աճուրդում հաղթած անձը 10 օրվա ընթացքում պարտավոր է ամբողջությամբ վճարել սակարկությունների արդյունքում ձևավորված գինը: Եթե նշված ժամկետում գինը չի վճարվում կամ սակարկությունում հաղթած անձը հրաժարվում է սակարկությունների արդյունքների մասին արձանագրությունը ստորագրելուց, այնպես էլ առուվաճառքի պայմանագիր կնքելուց, ապա համարվում է, որ հաղթած անձը հրաժարվել է հողամասը ձեռք բերելուց:</p> <p>2. Հաղթողի կողմից գումարն ամբողջությամբ վճարելուց հետո՝ երկու օրվա ընթացքում, կողմերի միջև կնքվում է օտարման պայմանագիր, որը վավերացվում է նոտարական կարգով և ենթակա է պետական գրանցման:</p>	Ընդունելի է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է
6.	ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան	Նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածը փոխել Հոդված 3-ով	Ընդունելի է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է

7.	ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան	Նախագիծ	Նախագիծը համալրել «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծով:	Ընդունելի է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է
----	--	---------	---	--	--------------------